«Տաթև» դպրոց
ՀՀ, 0065, ք. Երևան,
Սեբաստիա 3/7, 2-4-րդ հարկեր:
Հեռ.՝ (099)748040, (010)748040:
Էլ փոստ՝ tatevschool@yahoo.com
Կայք՝ www.tatevschool.am

Школа “Татев”
РА, 0065, Ереван,
Себастия 3/7, 2-4 этажи.
Тел. (099)748040, (010)748040.
Эл. почта: tatevschool@yahoo.com
Сайт: www.tatevschool.am

“Tatev” providing general education
Sebastia 3/7, 2-4 floors, 0065,Yerevan, RA.
Tel. (099)748040, (010)748040.
E-mail: tatevschool@yahoo.com
Website: www.tatevschool.am

<<Տաթև>> դպրոց

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ ---------- էջ 3
2. Ներածություն ---------- էջ 4-5
3. Հիմնական պարտադիր կրթության իրականացում. 2023-2024 ուստարվա խնդիրները- էջ 6
4. Ներդպրոցական վերահսկողության համակարգը ---------- էջ 7-10
5. Մանկավարժական խորհրդի նիստերի պլանավորում ---------- էջ 11-16
6. Մեթոդական միավորումների աշխատանքը ---------- էջ 17-21
7. Դասարանների դեկավարների աշխատանքը ---------- էջ 22-25
8. Միջոցառումները ---------- էջ 26-5

Ընդհանուր դրույթներ

<<Տաթև>> դպրոցը հանրակրթական ուսումնական հաստատություն է: Այն իր կազմում ունի տարրական և հիմնական դպրոց:

Դպրոցը գործում է իր կանոնադրության դրույթներով՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ:

Դպրոցն ինքնուրույն է հանրակրթական գործընթացի կազմակերպման գործում, ունի իրավական և ֆինանսական ինքնուրույնություն: Այն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ սահմանադրության պահանջներով:

<<Տաթև>> դպրոցն ապահովում է անհատի, հասարակության և պետության պահանջմունքների իրականացումն ընդհանուր կրթության գործում: Մեր կրթօջախը հասարակության և պետության առջև պատասխանատվություն է կրում սովորողի անձի կրթության իրավունքի իրականացման, ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման ձևերի ընտրության, կրթությանը ներկայացվող պարտադիր պահանջների լիարժեք յուրացման համար:

Մենք կրթությունը դիտարկում ենք որպես ազգային անվտանգության ապահովման, երկրի զարգացման ու հզորացման կարևոր գործոն և երաշխիք, իսկ գլխավոր նպատակը սովորողների մտավոր, ֆիզիկական, հոգևոր ու սոցիալական ունակությունների զարգացումն է և մտագործունեության տարբեր տեսակներին տիրապետող, ՀՀ քաղաքացու կատարելատիպին ձգտող, համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումը:

Կանոնադրությամբ սահմանված կրթանպատակները, բովանդակությունն ու չափորոշիչները պարտադիր են և միասնական <<Տաթև>> դպրոցի բոլոր սովորողների և աշխատակազմի համար:

Ներածություն

2022-2023 ուստարվա սկզբին դպրոցում աշակերտների թիվը եղել է 369, տարեվերջին՝ 362։ Գնահատվել է 298 աշակերտ, չի գնահատվել 64 առաջին դասարանցի։ Գերազանց առաջադիմություն են ունեցել 51-ը։ 9-րդ դասարանն ավարտել է 20 աշակերտ։

Դպրոցի 7 սովորող մասնակցել է առարկայական օլիմպիադայի մարզային, 2-ը՝ հանրապետական փուլերին։ Նրանցից մեկը՝ 5-րդ դասարանցի Գեղամ Կարապետյանը Մաթեմատիկայի օլիմպիադայի հանրապետական փուլում զբաղեցրել է 10-րդ տեղը և արժանացել է գովասանագրի։ Դպրոցի աշակերտները մասնակցել են «Մեղու», «Ռուսական արջուկ», «Կենգուրու» մրցույթներին։

Կազմակերպվել են առարկաների դասավանդման որակի բարելավման համար կատարվող ուսումնասիրություններ, որոնց արդյունքները քննարկվել են մեթոդական միավորումների և մանկավարժական խորհրդի նիստերում, կայացվել են համապատասխան որոշումներ։

Ուսումնական տարվա ընթացքում իրագործվել են բազմաքանակ, բազմաբովանդակ միջոցառումներ, որոնք դրական ազդեցություն են ունեցել սովորողների հայրենասիրական և գեղագիտական դաստիարակության ձևավորման վրա։ Կազմակերպվել են նաև արտապլանային միջոցառումներ (Զինվորի օր, <<Վերափոխում արքաների զորակցությամբ>>, ֆրանսերեն ամանորյա ցերեկույթ)։ Ուսանելի և նպատակային են եղել <<Միմոս>> խամաճիկների, տիկնիկային թատրոններում, Հ. Մալյանի անվան, Պատանի հանդիսատեսի, Համազգային թատրոններում ներկայացումների դիտումները, սիմֆոնիկ երաժշտության ունկնդրումը, այցելություններն Ազգային մանկական գրադարան, Մատենադարան, Ա. Սպենդիարյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Չարենցի, Մ. Սարյանի, Հ. Կոջոյանի, Դ. Դեմիրճյանի տուն-թանգարաններ, Հ. Թումանյանի, Ե. Քոչարի թանգարաններ, Հայաստանի ազգային պատկերասրահ, Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, Շենգավիթ հնավայր, Էրեբունի, Անատոմիական, Բնության թանգարաններ, <<Աբիո>> պարտեզ-կենտրոն, <<Կոկա-Կոլա>> գործարան, Կարինի տնկարան, <<Մեգերյան կարպետ>> գործարան, <<Գուրմէ Դուրմէ>> շոկոլադի տուն, Բյուրականի աստղադիտարան։ Կազմակերպվել են բազմաթիվ բեմական միջոցառումներ, ընթերցանության, աստղագիտության, ձեռագրի մրցույթներ, Գրքի տոն, արվեստի բնագավառի ներկայացուցիչների՝ երգահանի, տիկնիկագործի հետ հանդիպումներ, առարկայական մրցախաղեր, <<Կոչեմ ապրողաց>> խորագրով պարի փառատոն, Շախմատի համադպրոցական մրցաշար, սպորտլանդիաներ, նկարչական և ձեռքի աշխատանքների

ցուցահանդեսներ։ Ստեղծվել են առարկայական անկյուններ, պատի թերթեր։ Դպրոցում կազմակերպված միջոցառումներին հատկանշական է եղել բոլոր սովորողների ներգրավումը, և նախատեսված միջոցառումներն իրագործվել են սահմանված ժամկետներում։

Ուսումնական տարին բեղուն է եղել նաև բաց և ցուցադրական դասերով. աշխատել ենք յուրաքանչյուր ուսուցիչ՝ առնվազն մեկ բաց կամ ցուցադրական դաս սկզբունքով։ Դասերին հաջորդել են արդյունավետ քննարկումները։

Դպրոցի՝ 2023-2024 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի համար հիմք է ծառայել նախորդ ուստարվա արդյունքների վերլուծությունը՝ հաջողությունները, վրիպումները, առաջընթացի և զարգացման ուղիները։

2023-2024 ուսումնական տարեսկզբին կոմպլեկտավորվել է 26 դասարան՝ 370 աշակերտով.

Դասարանը	Դասարանների թիվը	Աշակերտների թիվը
1-ին	4	56
2-րդ	4	59
3-րդ	4	58
4-րդ	4	55
5-րդ	3	41
6-րդ	3	41
7-րդ	2	28
8-րդ	1	18
9-րդ	1	14
Ընդամենը	26	370

Հիմնական պարտադիր կրթության իրականացում.

2023-2024 ուստարվա խնդիրները

1. Սովորողների կյանքի և առողջության պահպանում։
2. Պետական ծրագրերի իրագործում, դասավանդման ձևերի ու մեթոդների կատարելագործում։
3. Դպրոցի գործունեության բարելավում։
4. Ուսուցման և դաստիարակության պրոբլեմների լուծում, զուգակցում և կիրարկում։
5. Ուսուցիչների մեթոդամանկավարժական պատրաստվածության կատարելագործում։
6. Սովորողների անհատականության, մտավոր, բարոյական և հոգեբանական հատկանիշների բացահայտում, նրանց դրական հակումների և նախասիրությունների, ֆիզիկական և մտավոր կարողությունների զարգացում։
7. Միջոցառումների միջոցով սովորողների հոգևոր և բարոյական նորմերի ձևավորում։

Ներդպրոցական վերահսկողության համակարգը

Ներդպրոցական վերահսկողությունը համակարգում են դպրոցի հիմնադիրը և տնօրենը։

Դպրոցի հիմնադիրը.

1)աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը,

2)հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները,

3)քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները,

4)հաստատում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ձևավորված տարիֆիկացիան,

5)համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ հարցազրույցի արդյունքում կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

6)ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, ուսումնանյութական բազայի հաշվառումը, պահպանումը, համալրումը,

7)ապահովում է անհրաժեշտ պայմաններ՝ ուսումնական պլանին համապատասխան կրթական ծրագրերի իրականացման, կրթական գործընթացի կազմակերպման համար,

8)ապահովում է արտադասարանական խմբակների և ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանները,

9)օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը։

Դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի համակարգումն ու մեթոդական ղեկավարումն իրականացնում է տնօրենը:

Դպրոցի տնօրենը.

1)հիմնադրին է ներկայացնում ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը,

2)դպրոցի ուսումնական պլանի հիման վրա կրթության կառավարման տեղեկատվական համակարգում իրականացնում է դասաբաշխում,

3)կրթության կառավարման տեղեկատվական համակարգում կառավարության որոշմամբ հաստատված մանկավարժական աշխատողների անվանացանկի հիման վրա ձևավորում և հաստատում է ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ աշխատողների անվանացանկը,

4)ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ կարիքները տրամադրում է հիմնադրին,

5)հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության, առաջադիմության և հաստատության ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնների նկատմամբ,

6)վերահսկում է էլեկտրոնային մատենավարությունը, ուսուցիչների հաճախումները, ուսուցիչների ամենօրյա հերթապահության գործընթացը,

7)մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է դպրոցի ուսումնական պլանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և տնօրենի տեղակալի, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների ու մանկավարժական աշխատողների հաշվետվությունները,

8)հաստատում է մեթոդական միավորումների աշխատանքային պլանները, դասղեկների աշխատանքային տարեկան ծրագրերը, ուսուցիչների թեմատիկ պլանները,

9)աջակցում է դպրոցի խորհրդակցական մարմինների աշխատանքներին,

10)համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է մանկավարժական աշխատողների, գործավարի, իր տեղակալի, օգնականի, մասնաճյուղի, կառուցվածքային ստորաբաժանումների (առարկայական մեթոդական միավորումների) ղեկավարների, դասղեկների ընտրությունը, բաշխում աշխատանքը,

11)ղեկավարում է մանկավարժական խորհրդի և համակարգում առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները, մասնակցում է մեթոդական միավորումների նիստերին,

12)կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակը (կամ ապահովում է ուսումնական պարապմունքների դասացուցակի կազմումը) և ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվությունները,

13)խրախուսում և խթանում է աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունները,

14)գնահատում է ուսուցչի աշխատանքը՝ հաշվի առնելով կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի սովորողների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքները,

15)աջակցում է ուսուցիչներին՝ մասնակցելու հերթական և կամավոր ատեստավորումներին, ինչպես նաև տարակարգ ստանալու նպատակով հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ աշխատանքների կատարմանը,

16)խրախուսում է մասնակցային կառավարումն ուսումնական հաստատության խորհրդակցական մարմիններում,

17)իրականացնում է վերահսկողություն դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, առաջադիմության, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, դպրոցի աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,

18)կատարում է դասալսումներ և կազմակերպում քննարկումներ,

19)կազմակերպում է առարկաների դասավանդման որակի բարելավման համար կատարվող ուսումնասիրություններ, իրականացնում է սովորողների ուսումնառության որակի որակական և քանակական վերլուծություններ,

20)կիսամյակի ավարտին անցկացնում է ամփոփիչ ստուգումներ,

21)կազմակերպում է տարեվերջյան քննությունները,

22)հրավիրում է դասղեկների խորհրդակցություն,

23)ապահովում է արտադասարանական խմբակների և ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բնականոն գործունեությունը,

24)ուսումնական պլանին համապատասխան՝ ապահովում է հանրակրթական ծրագրերի (հիմնական և լրացուցիչ) իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը և կրում է պատասխանատվություն կրթության որակի և բովանդակության համար,

25)ապահովում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և հիմնադրի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը,

26)ապահովում է դպրոցում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը,

27)ապահովում է դպրոցում իր գործառույթներից բխող՝ գործածության ենթակա փաստաթղթերի վարումը և պահպանումը,

28)սահմանված կարգով ձևավորում է դպրոցի սովորողների համակազմը, օրենսդրությամբ սահմանված կարգով քայլեր է ձեռնարկում նրանց սոցիալական և հոգեբանական պաշտպանվածության ապահովման ուղղությամբ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ստանալու իրավունքի իրացման ապահովման համար, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) հայտնաբերման դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է տարածքը սպասարկող խնամակալության և հոգաբարձության մարմնին,

29)օրենքով իրեն վերապահված գործառույթների շրջանակներում ներկայացնում է դպրոցը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում և այլ կազմակերպություններում, տալիս է լիազորագրեր,

30)օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

31)հիմնադրին է ներկայացնում արտաքին և ներքին գնահատման արդյունքները,

32)առաջարկություն է ներկայացնում հիմնադրին՝ մանկավարժական աշխատողներին դրամական խրախուսում տրամադրելու համար,

33)իրականացնում է օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ։

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը

Մանկավարժական խորհրդի նիստերի պլանավորում

2023-2024 ուստարում մանկավարժական խորհրդի նիստերում քննարկել հետևյալ հարցերը.

Առաջին նիստի օրակարգում օգոստոս

1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ տնօրեն)
2. 2023-2024 ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի կազմի հաստատում և մանկավարժական խորհրդի քարտուղարի ընտրություն (զեկուցող՝ տնօրեն)
3. Դպրոցի գործունեության ներքին գնահատման հաշվետվության քննարկում (զեկուցող՝ տնօրեն)
4. Դպրոցում 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողության հաստատում (զեկուցող՝ տնօրեն)
5. 2023-2024 ուսումնական տարվա դասաբաշխման և դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին (զեկուցող՝ տնօրեն)
6. Դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա ուսումնական պլանի հաստատում (զեկուցող՝ տնօրեն)
7. Առաջին կիսամյակի դասացուցակի հաստատում (զեկուցող՝ տնօրեն)
8. Ուսումնառության ներքին կարգապահական կանոնների մասին (զեկուցող՝ տնօրեն)
9. Դպրոցում 2023-2024 ուսումնական տարվա պետական չափորոշչին համապատասխան ուսումնական հիմնական ծրագրերի իրագործման խնդիրների, ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, նոր դասագրքերի, մեթոդական գրականության կիրառման մասին (զեկուցող՝ տնօրեն)
10. Դպրոցի սովորողների ուսումնական առաջադիմության

ընթացիկ և ամփոփիչ գնահատման մասին (զեկուցող՝ տնօրեն)

11. Մեթոդական միավորումների ձևավորման մասին (զեկուցող՝ տնօրեն)
12. Դպրոցի 2-9-րդ դասարանները սովորողներով համալրելու մասին: Դասարանների կազմավորման հարցի քննարկում (զեկուցող՝ տնօրեն)
13. 2023-2024 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի ներկայացում և հաստատում (զեկուցող՝ տնօրեն)
14. Մեթոդական միավորումների, դասղեկների աշխատանքային պլանների հաստատում (զեկուցող՝ մեթոդական միավորումների նախագահներ, դասղեկներ)
15. Վերաքննությունների մասին (զեկուցող՝ տնօրեն)
16. Դասագրքերի բաշխման մասին (զեկուցող՝ գրադարանավար)

<u>Երկրորդ նիստի օրակարգում</u> հոկտեմբեր

1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն)
2. Առարկաների դասավանդման որակի բարելավման համար կատարվող ուսումնասիրության հարցեր (զեկուցող՝ մեթոդական միավորումների նախագահներ)
3. Օլիմպիադաների նախապատրաստական աշխատանքների հաստատում (զեկուցող՝ տնօրեն)
4. Տետրերի ստուգումների արդյունքների ամփոփում (զեկուցող՝ մեթոդական միավորումների նախագահներ)
5. Էլեկտրոնային մատյանում գրանցումների, գնահատումների, բացակայությունների հարցի քննարկում (զեկուցող՝ տնօրեն)
6. Ընթացիկ հարցեր

<u>Երրորդ նիստի օրակարգում</u> դեկտեմբեր

1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում.

անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն)

2. 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում սովորողների առաջադիմության արդյունքների ամփոփում (զեկուցող՝ դասղեկներ)
3. 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների ամփոփում: Ուսումնադաստիարակչական աշխատանքների 1-ին կիսամյակի տարեկան պլանի կատարման մասին (զեկուցող՝ տնօրեն)
4. Մեթոդական միավորումների, դասղեկների աշխատանքների արդյունավետության քննարկում (զեկուցող՝ տնօրեն)
5. Ներդպրոցական առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփում և հաջորդ փուլի նախապատրաստում: Տարածքային փուլ անցած աշակերտների անվանացանկի հաստատում (զեկուցող՝ մեթոդական միավորումների նախագահներ)
6. Դպրոցից սովորողների տեղափոխման և ընդգրկման (աշակերտների շարժի) հարցի ներկայացում (զեկուցող՝ տնօրեն)
7. 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական պլանի և դասաբաշխման հաստատում (զեկուցող՝ տնօրեն)
8. Ընթացիկ հարցեր

<u>Չորրորդ նիստի օրակարգում</u> փետրվար

1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն)
2. Առարկաների դասավանդման որակի բարելավման համար կատարվող ուսումնասիրության հարցեր (զեկուցող՝ մեթոդական միավորումների նախագահներ)
3. Սովորողների՝ առարկայական օլիմպիադաներում ցուցաբերած արդյունքների ներկայացում

(զեկուցող՝ տնօրեն)

4. 2023-2024 ուստարվա 9-րդ դասարանի շրջանավարտների ավարտական քննությունների նախապատրաստման հետ կապված հարցեր, սովորողների կողմից ընտրված ավարտական քննական առարկաների ցանկի ներկայացում (զեկուցող՝ տնօրեն)
5. Մեթոդական միավորումների հաշվետվություններ (զեկուցող՝ մեթոդական միավորումների նախագահներ)
6. Ընթացիկ հարցեր

<u>Հինգերորդ նիստի օրակարգում</u> ապրիլ

1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն)
2. Առարկաների դասավանդման որակի բարելավման համար կատարվող ուսումնասիրության հարցեր (զեկուցող՝ մեթոդական միավորումների նախագահներ)
3. Էլեկտրոնային մատյաններում գրանցումների, գնահատումների, բացակայությունների հարցի քննարկում (զեկուցող՝ տնօրեն)
4. Տնօրինության կողմից ապրիլին տրված գրավոր աշխատանքների արդյունքների քննարկում (զեկուցող՝ տնօրեն)
5. Ընթացիկ հարցեր

<u>Վեցերորդ նիստի օրակարգում</u> մայիս

1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն)
2. Ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման հարցը (զեկուցող՝տնօրեն)
3. Ընթացիկ հարցեր

Յոթերորդ նիստի օրակարգում մայիս

1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն)
2. 2023-2024 ուսումնական տարվա փոխադրական դասարաններում ուսման առաջադիմության ամփոփման, սովորողներին դասարանից դասարան փոխադրելու, 4-րդ դասարանների սովորողներին գիտելիքների ստուգումներին, 9-րդ դասարանի սովորողներին ավարտական քննություններին թույլատրելու, ՀՀ ԿԳՄՄՆ-ի գովասանագրերով և դպրոցի շնորհակալագրերով պարգևատրելու մասին (զեկուցող՝ դասղեկներ և տնօրեն)
3. Վերաքննությունների մասին, ամառային առաջադրանքների հաստատում (զեկուցող՝ տնօրեն)
4. 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների ամփոփում: Ուսումնադաստիարակչական աշխատանքների 2-րդ կիսամյակի տարեկան պլանի կատարման մասին (զեկուցող՝ տնօրեն)
5. 4-րդ դասարաններում գիտելիքների ստուգումների և 9-րդ դասարանում ավարտական քննությունների կազմակերպման աշխատակարգի ներկայացում, քննական հանձնաժողովների կազմի հաստատում (զեկուցող՝ տնօրեն)
6. Ընթացիկ հարցեր

Ութերորդ նիստի օրակարգում հունիս

1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն)
2. Դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա 4-րդ դասարաններում գիտելիքների ստուգումների արդյունքների ամփոփում (զեկուցող՝ տնօրեն)

Իններորդ նիստի օրակարգում հունիս

1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն)
2. Դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա 9-րդ դասարանում ավարտական քննությունների արդյունքների ամփոփում (զեկուցող՝ տնօրեն)
3. Դպրոցում գործող արտադասարանական խմբակների և կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (հոգեբանական, առողջապահական) ծառայությունների գործունեության հաշվետվություն (զեկուցող՝ խմբակավարներ, հոգեբան, բժիշկ)
4. Դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների զարգացման տարեկան ծրագրի արդյունքների քննարկում (զեկուցող՝ տնօրեն)

Անհրաժեշտության դեպքում ուստարվա ընթացքում հրավիրել մանկավարժական խորհրդի արտահերթ նիստեր, որոնց ընթացքում քննարկել հրատապ լուծում պահանջող խնդիրները։

Մեթոդական միավորումների աշխատանքը

Ուսուցիչների առարկայական և մեթոդամանկավարժական պատրաստականության բարձրացման, ըստ օղակների աշխատանքները համակարգելու և վերահսկելու նպատակով ստեղծել հետևյալ մեթոդական միավորումները և նախագահներ նշանակել հետևյալ ուսուցիչներին.

- Տարրական կրթության. նախագահ՝ դասվար Աննա Ալեքսանյան,
- Հայերենի. նախագահ՝ Մայրենիի ուսուցչուհի Նարինե Հասրաթյան,
- Ռուսաց լեզվի. նախագահ՝ Ռուսաց լեզվի ուսուցչուհի Լիանա Ամիրխանյան,
- Անգլերենի. նախագահ՝ Անգլերենի ուսուցչուհի Շաքե Դանիելյան,
- Մաթեմատիկայի. նախագահ՝ Մաթեմատիկայի ուսուցչուհի Նարինե Գրիգորյան,
- Բնագիտապատմաշխարհագրական. նախագահ՝ Բնագիտության ուսուցչուհի Քրիստինե Հարությունյան,
- Արվեստի, արհեստի և սպորտի. նախագահ՝ Ֆիզկուլտուրայի ուսուցչուհի Էլվիրա Սարգսյան։

Աշխատանքի անվանումը	Ժամկետը	Կատարող անձը
Մեթոդական միավորումների ամենամսյա նիստերի կազմակերպում և անցկացում	ուստարվա ընթացքում	մեթոդական միավորման ղեկավար
Ուսումնական կաբինետների, դասասենյակների կահավորում, ուսումնադիտողական պարագաների ձեռքբերում և ստեղծում	ուստարվա ընթացքում	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրում, ընդհանրացում և ներդրում պրակտիկ աշխատանքում	ուստարվա ընթացքում	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Ուսուցիչներին՝ նոր չափորոշիչներին և ծրագրերին, գնահատման նոր համակարգին, մանկավարժության նորագույն նվաճումներին հաղորդակցում, սեմինարների, ընթերցումների կազմակերպում	ուստարվա ընթացքում	մեթոդական միավորման ղեկավար

Մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդատվությունների կազմակերպում, ստեղծագործական նախաձեռնությունների խթանում	ուստարվա ընթացքում	մեթոդական միավորման ղեկավար
Սահմանված կարգով նոր դասագրքերի փորձաքննության կազմակերպում	ուստարվա ընթացքում	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Ուսուցիչների մանկավարժական-մասնագիտական մակարդակի, դասավանդման որակի բարձրացման ուղղությամբ կատարվող աշխատանքներ	ուստարվա ընթացքում	մեթոդական միավորման ղեկավար
Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման, ընդհանրացման և ներդրման նպատակով փոխադարձ դասալսումների կազմակերպում և քննարկում	ուստարվա ընթացքում	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Դասավանդման մեթոդների կատարելագործման, համագործակցային ուսուցման և նոր տեխնոլոգիաների կիրառման նպատակով բաց և ցուցադրական դասերի կազմակերպում	ուստարվա ընթացքում	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Առարկաների դասավանդման որակի բարելավման համար կատարվող ուսումնասիրություններ	ուստարվա ընթացքում	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Համացանցի <<www.armedu.am>> կայք-էջի, մասնագիտական ամսագրերի, թերթերի նյութերի ուսումնասիրում և քննարկում	ուստարվա ընթացքում	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Սովորողների առաջադիմությանը նպաստող կամ խոչընդոտող գործոնների բացահայտում և քննարկում	ուստարվա ընթացքում	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ

Վերահսկողություն շերտավորված ուսուցման կիրառման նկատմամբ	ուստարվա ընթացքում	մեթոդական միավորման ղեկավար
Ուսուցման արդյունավետ մեթոդների ներկայացում և քննարկում	ուստարվա ընթացքում	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Ուսումնական ծրագրերի, մատենավարության կատարման նկատմամբ վերահսկողություն	ուստարվա ընթացքում	մեթոդական միավորման ղեկավար
Աշխատանքային տետրերի վարման կարգի վերաբերյալ վերահսկողություն	ուստարվա ընթացքում	մեթոդական միավորման ղեկավար
Բազմաբնույթ միջոցառումների, առարկայական մրցույթների կազմակերպում՝ ի նպաստ սովորողների գիտելիքների բարելավման, դաստիարակության, ճաշակի ձևավորման, հոգևոր զարգացման, ստեղծագործական մտածողության, հմտությունների ու կարողությունների կատարելագործման	ուստարվա ընթացքում	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Մեթոդական միավորումների նախագահների ընտրություն	օգոստոս	տնօրեն և մեթոդական միավորման անդամներ
Մեթոդական միավորումների աշխատանքների պլանավորում և կազմակերպում	օգոստոս	մեթոդական միավորման ղեկավար
Մեթոդական միավորումների աշխատանքային պլանների քննարկում և հաստատում	օգոստոս	տնօրեն, մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Ուսումնական պլանի, պետական և դպրոցական բաղադրիչով նախատեսված ժամաքանակների բաշխման մասին քննարկում	օգոստոս	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Ուսումնական պլանով սահմանված	օգոստոս	մեթոդական միավորման

դասաժամերի նախնական բաշխում		ղեկավար
Ուսումնական նոր ծրագրերի, նոր դասագրքերի ու մեթոդական ձեռնարկների ուսումնասիրում և քննարկում	օգոստոս	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Առարկայական թեմատիկ պլանավորումների քննարկում և հաստատում	օգոստոս	տնօրեն և մեթոդական միավորման ղեկավար
Տետրերի քանակի, հասցեագրման, դասագրքերի խնամքով օգտագործման մասին քննարկում	օգոստոս	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Նոր ուստարվա համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի նախագծի քննարկում	օգոստոս	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Դպրոցում ուսումնական նախագծերի իրականացման վերաբերյալ քննարկում	հոկտեմբեր	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Դպրոցական առարկայական օլիմպիադաների կազմակերպում	դեկտեմբեր	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Առաջին կիսամյակի ամփոփիչ աշխատանքների կազմակերպում	դեկտեմբեր	մեթոդական միավորման ղեկավար
Առաջին կիսամյակի ընթացքում կազմակերպված բաց և ցուցադրական դասերի քննարկում	դեկտեմբեր	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Առաջին կիսամյակի ուսումնադաստիարակչական աշխատանքների քննարկում	դեկտեմբեր	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Առաջին կիսամյակի ամփոփիչ աշխատանքների արդյունքների վերլուծություն և քննարկում	հունվար	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Ամառային հանձնարարությունների քննարկում	մարտ	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ

Երկրորդ կիսամյակի ամփոփիչ աշխատանքների կազմակերպում	մայիս	մեթոդական միավորման ղեկավար
Երկրորդ կիսամյակի ընթացքում կազմակերպված բաց և ցուցադրական դասերի քննարկում	մայիս	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Երկրորդ կիսամյակի ուսումնադաստիարակչական աշխատանքների քննարկում	մայիս	մեթոդական միավորման ղեկավար և անդամներ
Իրազեկում քննական հրահանգներին	մայիս	մեթոդական միավորման ղեկավար
Մեթոդական միավորումների նախագահների հաշվետվությունների ներկայացում	մայիս	մեթոդական միավորման ղեկավար

Դասարանների դեկավարների աշխատանքը

2023-2024 ուստարում դասվարներ և դասղեկներ նշանակել հետևյալ ուսուցիչներին.

Դասարանը	Դասարանի անվանումը	Դասվարը/դասղեկը
1-ին	«Թումանյան»	Գաբրիելյան Մարինե
1-ին	«Կոմիտաս»	Գրիգորյան Մելինե
1-ին	«Նժդեհ»	Սարգսյան Աննա
1-ին	«Ռաֆֆի»	Աբգարյան Նատալյա
2-րդ	«Արատտա»	Շառյան Անահիտ
2-րդ	«Հայք»	Ալեքսանյան Աննա
2-րդ	«Նաիրի»	Ծատուրյան Վարդուհի
2-րդ	«Ուրարտու»	Ավետիսյան Նվարդ
3-րդ	«Աղձնիք»	Առաքելյան Թամարա
3-րդ	«Արցախ»	Ծատուրյան Վարդուհի
3-րդ	«Գուգարք»	Շառյան Անահիտ
3-րդ	«Տայք»	Եղիզարյան Սրբուհի
4-րդ	«Արծրունի»	Ավետիսյան Լուսինե
4-րդ	«Արշակունի»	Մատինյան Ռուզաննա
4-րդ	«Բագրատունի»	Հակոբյան Լիլիթ
4-րդ	«Հայկազունի»	Քառյան Լիլիթ
5-րդ	«Անի»	Դանիելյան Շաքե
5-րդ	«Դվին»	Գասպարյան Մարգարիտա
5-րդ	«Կարս»	Կնյազյան Մերի
6-րդ	«Ակնա»	Դանիելյան Շաքե
6-րդ	«Սևան»	Մարտիրոսյան Տաթևիկ
6-րդ	«Վան»	Հասրաթյան Նարինե
7-րդ	«Եփրատ»	Գրիգորյան Նարինե
7-րդ	«Տիգրիս»	Ամիրխանյան Լիանա
8-րդ	«Սիփան»	Հասրաթյան Նարինե
9-րդ	«Փայլածու»	Սարգսյան Էլվիրա

Դասղեկը կատարում է.

Դաստիարակչական աշխատանք իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ	ուստարվա ընթացքում
Սովորողների մանկավարժահոգեբանական հետազոտություն (մանկավարժահոգեբանական ախտորոշում)	ուստարվա ընթացքում
Դասղեկական դասարանում տարբեր առարկաների դասալսումներ	ուստարվա ընթացքում
Մասնակցություն իր ղեկավարած դասարանում սովորողների՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և անհատական ուսուցման պլանի մշակմանը	ուստարվա ընթացքում
Անհրաժեշտության դեպքում առաջարկության ներկայացում տվյալ առարկան դասավանդող ուսուցչին՝ սովորողին ուսումնական օգնություն ցուցաբերելու նպատակով երկարօրյա խմբում ընդգրկելու համար	ուստարվա ընթացքում
Դասարանի համար սահմանված գործավարության, էլեկտրոնային գրանցումների իրականացում, դպրոցի տնօրինությանը սովորողների առաջադիմության, հաճախումների, վարքի և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մասին տեղեկատվության ներկայացում	ուստարվա ընթացքում
Սովորողների սոցիալական պաշտպանություն	ուստարվա ընթացքում
Դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանը սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացում	ուստարվա ընթացքում
Վերահսկողություն իր դասարանի սովորողների՝ դպրոցում գործող խմբակներում մասնակցության նկատմամբ	ուստարվա ընթացքում
Դպրոցում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման ապահովում	ուստարվա ընթացքում
Կրթության գործընթացում դասարանական կոլեկտիվի փոխհարաբերությունների (առողջ, համերաշխ հարաբերություններ աշակերտների միջև, աշակերտների և ուսուցիչների միջև, ներդասարանական, միջդասարանական փոխհարաբերություններ)	ուստարվա ընթացքում

վերլուծություն, համակարգում, կարգավորում	
Մանկավարժական աջակցություն աշակերտական ինքնավարության դասարանական մարմնին	ուստարվա ընթացքում
Սովորողների կողմից ուսումնառության ներքին կարգապահական կանոնների և Աշակերտի վարքականոնի պահպանման նկատմամբ վերահսկողություն	ուստարվա ընթացքում
Սովորողների հաճախումների նկատմամբ վերահսկողություն	ուստարվա ընթացքում
Վերահսկողություն դպրոցի տարածքի մաքրության, դասարանի սանիտարական վիճակի, պահարաններում կարգավորվածության, գույքի հանդեպ սրտացավ վերաբերմունքի նկատմամբ	ուստարվա ընթացքում
Վերահսկողություն դասարանում հերթապահության կազմակերպման նկատմամբ	ուստարվա ընթացքում
Վերահսկողություն դասագրքերի պահպանման նկատմամբ	ուստարվա ընթացքում
Վերահսկողություն աշակերտների սնվելու և ճաշարանում բարեկիրթ վարքի նկատմամբ	ուստարվա ընթացքում
Վերահսկողություն աշակերտների արտաքին տեսքի (համազգեստ, սանրվածք) պատշաճության նկատմամբ	ուստարվա ընթացքում
Սովորողների համար առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը, նվիրյալ հայորդիների դաստիարակմանը նպաստող ձեռնարկների, մրցույթների, նպատակային էքսկուրսիաների, շրջագայությունների և այլ միջոցառումների պլանավորում, նախապատրաստում, իրականացում, արդյունքների ամփոփում, վերլուծություն	ուստարվա ընթացքում
Դասղեկի ժամի վարում	ուստարվա ընթացքում
Աշխատանք սովորողների ծնողների հետ. հետևողական ուշադրություն դպրոց-ընտանիք կապի ամրապնդմանը	ուստարվա ընթացքում
Աշխատանք դասարանի ծնողական խորհրդի հետ	ուստարվա ընթացքում
Ծնողական ժողովների վարում	ուստարվա ընթացքում
Աշխատանքային տարեկան ծրագրի կազմում	օգոստոս
Իր դասարանի սովորողների դասագրքերի ստացում գրադարանից	օգոստոս
Աշակերտների ընտանեկան դաստիարակության պայմանների ուսումնասիրություն	սեպտեմբեր

Լրացուցիչ կրթության հաստատություններում դասարանի աշակերտների մասնակցության մասին սպառիչ տեղեկությունների հավաքագրում	սեպտեմբեր
Աշակերտների հետ համատեղ դասարանի կենսագործունեության պլանի ձևավորում	սեպտեմբեր
Առաջին կիսամյակում դասարանի կրթադաստիարակչական կենսագործունեության արդյունքների ամփոփում և վերլուծություն	դեկտեմբեր
Հաշվետվություն դասարանի առաջադիմության մասին	դեկտեմբեր
Երկրորդ կիսամյակում դասարանի կրթադաստիարակչական կենսագործունեության արդյունքների ամփոփում և վերլուծություն	մայիս
Հաշվետվություն դասարանի առաջադիմության մասին	մայիս
Իր դասարանի սովորողների դասագրքերի հանձնում գրադարան	մայիս

Միջոցառումները

Արտադասարանական աշխատանքների կազմակերպում

1. 2023-2024 ուստարում դպրոցի 2-րդ և 5-րդ դասարաններում սովորողների համար ստեղծել Պարի խմբակներ,
2. խմբակներում ընդգրկել դպրոցի 2-րդ և 5-րդ դասարանների բոլոր սովորողներին, խմբակների ղեկավարներ նշանակել Մերի Սամվելի Թադևոսյանին և Նելլի Կարենի Համբարձումյանին,
3. հաստատել Պարի խմբակների թեմատիկ պլանները և մատյանները,
4. խմբակների աշխատանքների կազմակերպման և վարման վերահսկողությունը դնել տնօրենի վրա։

Գաղափարաքաղաքական և հայրենասիրական դաստիարակություն

Սովորողների մոտ արմատավորել հայ ազգի, նրա լեզվի, հերոսների, հաղթանակների նկատմամբ հարգանքն ու հպարտության զգացումը:

Այդ նպատակով.

- անցկացնել հայրենասիրական զրույցներ (ի թիվս դրանց՝ զրույցներ «Իմ երկրի պատմության հերոսական էջերը», «Հայ ազգային հերոսները» թեմաներով),
- սովորողներին ծանոթացնել ազգային հերոսների կենսագրությանն ու սխրանքներին,
- կազմակերպել հանդիպումներ անվանի հայորդիների, Արցախի ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների հետ,
- կազմակերպել հայ գրողներին նվիրված թեմատիկ միջոցառումներ, մեծարման երեկոներ, ստեղծել սահիկաշարեր,
- նշանավորել Մայրենի լեզվի օրը. այդ օրվա ընթացքում անցկացնել միջդասարանային ասմունքի մրցույթներ, պարգևատրել ամենաընթերցասերներին,
- կազմակերպել կինոդիտումներ,
- կազմակերպել գրական-երաժշտական ցերեկույթներ,
- ընդգծված ուշադրություն դարձնել դպրոցում ստեղծված Փառքի անկյանը, մշտապես ծաղիկներ խոնարհել…

Գեղագիտական դաստիարակություն

Գեղագիտական դաստիարակության իրագործման ուղին գեղագիտական լուսավորությունն է. հարկավոր է սովորողներին մշտապես հաղորդակից դարձնել արվեստի բնագավառներին, խթանել նրանց ստեղծագործական ունակություններն ու գործնական հմտությունները:

Այդ նպատակով.

- ստեղծել գեղագիտական խորհուրդ հետևյալ կազմով.
  Վարդուհի Ծատուրյան - դասվար,
  Նարինե Հասրաթյան – Մայրենիի ուսուցչուհի,
  Նարինե Ռնազյան – Կերպարվեստի ուսուցչուհի,
- կազմակերպել գրքերի քննարկումներ,
- կազմակերպել ներկայացումների և կինոնկարների դիտումներ և քննարկումներ,
- կազմակերպել էքսկուրսիաներ Հայաստանի տեսարժան վայրեր, թանգարաններ և պատկերասրահներ,
- անցկացնել զրույցներ մշակույթի անվանի գործիչների մասին,
- իրականացնել դաս-հանդիպումներ <<Դասը վարում է արվեստագետը>> խորագրով,
- նախաձեռնել դասական երաժշտության ունկնդրում,
- բացել նկարչական և ձեռքի աշխատանքների ցուցահանդեսներ,
- ձևավորել <<Մենք ստեղծագործում ենք>> անկյուններ,
- Կերպարվեստի, Երաժշտության, Տեխնոլոգիայի դասաժամերին իրականացնել դասալսումներ, ուսումնասիրել նշված առարկաների դասավանդման արդունավետությունը և արդյունքները քննարկել Արվեստի, արհեստի և սպորտի մեթոդական միավորման նիստում:

Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունը ենթադրում է օրգանիզմի առողջության ամրապնդում և կոփում. շարժողական որակների զարգացում (ուժ, արագություն, ճարպկություն), ֆիզիկական վարժությունների ու կոփման հիգիենայի մասին գիտելիքների հաղորդում:

Այդ նպատակով.

- կազմակերպել շախմատի միջդասարանային մրցումներ 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-9-րդ դասարաններում սովորողների միջև,
- կազմակերպել շախմատի համադպրոցական մրցաշար,

- կազմակերպել միջդասարանային սպորտլանդիա 1-ին դասարաններում և 6-րդ դասարաններում սովորողների միջև,
- ուսումնասիրել և Արվեստի, արհեստի և սպորտի մեթոդական միավորման նիստում քննարկել ֆիզիկական դաստիարակության դրվածքը դպրոցում,
- հարստացնել դպրոցի մարզական բազան:

Բնապահպանական դաստիարակություն

Նպաստել սովորողների՝ բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի, պատասխանատվության զարգացմանն ու բարձրացմանը:

Այդ նպատակով.

- սովորողներին գիտելիքներ հաղորդել բնության և հասարակության կապի, բնության գոյության անհրաժեշտության, բնությունից օգտվելու և բնությունը պահպանելու մասին,
- կազմակերպել ծառատունկ «Յուրաքանչյուրը՝ մեկ ծառ» նշանաբանով,
- սովորողների միջոցով իրականացնել դպրոցում աճեցվող բույսերի խնամքը:

Աշխատանքային դաստիարակություն

Սովորողների մեջ ձևավորել իրենց և ընդհանուրի համար աշխատելու մշտական պահանջմունքը՝ մասնակից դարձնել բազմազան աշխատանքների, քայլ առ քայլ ընտելացնելով աշխատանքային կարգուկանոնին: Զարգացնել աշխատանքային համառություն, կամք և գիտակցական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ:

Հոգևոր դաստիարակություն

Որպես ազգային ինքնությունը կրող ու պահպանող վաղվա քաղաքացի՝ այսօրվա դպրոցականի գիտակցության մեջ բարոյական ու հոգևոր արժեքների ձևավորման նպատակով կազմակերպել զրույցներ, ծանոթացնել ազգային ավանդույթներին ու տոներին:

Digitally signed by PETROSYAN OFELYA 6003690208